

Որուն փրշուրն անհամար աստղերու պես կը ցաթի  
Տիեզերքին մէջ հոգւոյս՝ ուր ոլորտներ կ'իյնան լայն...

Դ

## 20. ՄՐՈՒՐԸ

Իրիկունը, մետաքսներու պես փափուկ,  
Իրիկունը՝ շարքաթներու պես քաղցր է.  
Իրիկունը բաժակն է՝ շուրթը տամուկ՝  
Չոր նայադ մը հըրամցընել կը բերէ:  
Օ՛հ, զիս հիմակ հիւղակին դուռը տարեք,  
Լուսաշապիկ օդանոյշներն իրիկուան,  
Աւազանին մօտ, ուռիին շուքին տակ՝  
Օ՛հ, զիս հիմակ հիւղակին դո՛ւռը տարեք...:

Այս բաժակին հեղուկն ո՛րքան հոտեւան,  
Այս բաժակին հեղուկն ո՛րքան հեշտին է.  
Թաւուտքներուն մէջը քիչ քիչ կը մթնէ՛.  
Պիտի փշրի՛, աւա՛ղ բաժակն իրիկուան...

Շրթունքներըս վերջին պուտին են ծարաւ,  
Ու ես Գարնան Յիւղին տարփոտ շուքին տակ  
Կը մօտեցնեմ երկչոտ՝ բաժակն իմ բերնիս.  
Դիրտ մը կայ հոն, զոր հեգ հոգիս դժուարաւ:

Ու դառնութեամբ կ'ըմպէ մինչեւ իր յատակ.  
Յիւղին կոյսն է՝ որ մըթնշաղն իմ սրտիս  
Կը սեւցընէ՝ հեծկտոտքով մը գիշեր...

Կը հեծեծէ՛, ու չի՛ գիտեր թէ քարին  
Քսուող սի՛րտս ալ ինկաւ ցայգուն մէջ խորին:

Ե

## 21. ՀԻԴԻՆ ԱՇՈՒՆԸ

Այծամարդեր հովին քընարն են կապտեր,  
Ու պարտեզին մէջ անդադար կը զարնեն  
Խառնանըւազ եղանակ մը խօլական,  
Որուն ջուրն ալ կը խառնէ մերթ իր կերկեր:  
Շահպրակները մընացեր են առանձին,